ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.05.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2022/68

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ

Մասնակից՝ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ

Մասնակցությամբ՝

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի ներկայացուցիչներ՝ Է. Անդրեասյանի, Լ. Ապրեսյանի, Գ. Բարխանաջյանի,

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-02/2022» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ֆինանսական աուդիտի ծեռքբերում

«ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-04/2022» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ֆինանսական աուդիտի ծեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 18.04.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-02/2022» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-02/2022» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամին «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-02/2022» ծածկագրով գնանշման հարցման արդյունքում կնքել պայմանագիր «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հետ:

3. Պարտավորեցնել «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-04/2022» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չեղյալ հայտարարել «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-04/2022» ծածկագրով ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 18.04.2022թ.-ին:

Բողոքներ քննող անձի կողմից 19.04.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/68 համարի ծածկագիրը:

28.04.2022թ.-ին և 06.05.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 28.04.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.05.2022թ.-ին:

2. «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն 18.04.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի (Պատվիրատու) կողմից վերջինիս կարիքների համար ֆինանսական աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-02/2022» ծածկագրով գնանշման հարցում /այսուհետև նաև՝ Ընթացակարգ 1/:

Վերը նշված ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ն: Այնուհետև, գնահատող հանձնաժողովի 17.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության (նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում) 3-րդ կետի համաձայն՝ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Հանձնաժողովը որոշել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակցին առաջարկել ժամկետը ավարտվելուց հետո ներկայացնել որակավորման ապահովում: Նույն կետով որոշվել է անգործության ժամկետի ավարտ սահմանել 22.01.2022թ.:

01.02.2022թ. ժամը 11:49 Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովից էլեկտրոնային եղանակով ՓԲԸ-ն ստացել է պայմանագիր կնքելու առաջարկ հետևյալ բովանդակությամբ. «Հարգելի գործընկեր Ձեզ եմ ուղարկում ֆինանսական աուդիտի պայմանագրի նախագիծը: Ես ընդհանուր ֆայլն եմ ուղարկել դուք պայմանագիրը վերանայեք եթե չկա փոփոխության կարիք կանցնեք հետագա քայլերին: Կանխավ Շնորհակալ եմ» /էլ. նամակի արտապատումը կցվում է/:

10.02.2022թ. Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովը www.gnumner.am կայքում հրապարակել է պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը, որով այս անգամ անգործության ժամկետ է սահմանվել 15.02.2022թ.:

«ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ն Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովից կրկին ստացել է պայմանագիր կնքելու առաջարկ և պայմանագրի նախագիծը:

«ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ն 16.02.2022թ. ստորագրել և կնքել է ուղարկված պայմանագրի նախագիծը, պայմանագրի և որակավորման ապահովումները և դրանց ներկայացրել գնահատող հանձնաժողովին:

Վերոհիշյալից հետո «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն սպասել է, որպեսզի Պատվիրատուն տրամադրի իրենց երկկողմանի ստորագրած պայմանագիրը, սակայն ապարդյուն:

Այնուհետև, Ընթցակարգ 1-ի գնահատող հանձնաժողովի կողմից 18.03.2022թ. www.gnumner.am կայքում հրապարակել է հայտարարություն Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կարիքների համար՝ ֆինանսական աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-

02/2022» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ՝ ”Գնումների մասին” ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա: Հայտարարության մեջ նշվել է, որ Ընթացակարգ 1-ը հայտարարվել է չկայացած, քանի որ մրցույթի ընթացքում հաղթող ճանաչված «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն գրանցված չէ աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող կազմակերպությունների ռեեստրում:

Այնուհետև, նույն ընթացակարգը վերահայտարարվել է: Մասնավորապես, «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամի կողմից վերջինիս կարիքների համար ֆինանսական աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով 28.03.2022թ. հայտարարվել է «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-02/2022» ծածկագրով գնանշման հարցումը /այսուհետև նաև՝ Ընթացակարգ 2/:

Ընթացակարգ 2-ի՝ Հրավերի «Տեխնիկական առաջադրանք և ծառայությունների շրջանակը» բաժնում սահմանվել է հետևյալը՝ Աուդիտորական կազմակերպությունը պետք է գրանցված լինի աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող աուդիտորների և աուդիտորական կազմակերպությունների ռեեստրում, հետևյալ հղմամբ՝ http://minfin.am/hy/page/auditorneri_pordzaget_hashvapahneri_ev_auditorakan_kazmakerputyunneri_miasnakan_reestr/ կայքում): Նման պահանաջ Ընթացակարգ 1-ի հրավերում ամրագրված չէր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 36-րդ հոդվածի՝

3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

4-րդ մասի համաձայն՝ մինչև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

Օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝

1. Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պետական

գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված հայտարարությունն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին՝ ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

5. Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձի [հետ] չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

Օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնման ընթացակարգի արդյունքում կնքվում է պայմանագիր:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

4. Մինչև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

Ինչպես արդեն նշել ենք, «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-02/2022» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով հաղթող մասնակից է ճանաչվել «ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ն: Վերջինիս Պատվիրատուի կողմից ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ

և պայմանագրի նախագիծ, որը ՓԲԸ-ն 16.02.2022թ. ստորագրել է և ներկայացրել Պատվիրատուին:

Վերոհիշյալից հետո «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն սպասել է, որպեսզի Պատվիրատուն տրամադրի իրենց երկկողմանի ստորագրած պայմանագիրը, սակայն ապարդյուն:

Այնուհետև, Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովի կողմից 18.03.2022թ. www.gnumner.am կայքում հրապարակել է հայտարարություն Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կարիքների համար՝ ֆինանսական աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-02/2022» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ՝ ”Գնումների մասին” ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա: Հայտարարության մեջ նշվել է, որ Ընթացակարգ 1-ը հայտարարվել է չկայացած, քանի որ մրցույթի ընթացքում հաղթող ճանաչված «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն գրանցված չէ աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող կազմակերպությունների ռեեստրում:

Այնուհետև, նույն ընթացակարգը վերահայտարարվել է: Մասնավորապես, «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամի կողմից վերջինիս կարիքների համար ֆինանսական աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով 28.03.2022թ. հայտարարվել է «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-02/2022» ծածկագրով գնանշման հարցումը /այսուհետև նաև՝ Ընթացակարգ 2/:

Գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները՝ չստորագրելով «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ստարգրած և ներկայացրած պայմանագիրը, այնուհետև առանց համապատասխան իրավական հիմքի չկայացած հայտարարելով Ընթացակարգ 1-ը:

Նախ և առաջ, Ընթացակարգ 1-ինի հրավերը չի նախատեսել պահանջ, որ մասնակիցը պետք է գրանցված լինի աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող կազմակերպությունների ռեեստրում:

Բացի այդ, բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ Դատարանի և բողոքներ քննող անձի իրավապարտադիր որոշման հիման վրա «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կարգավիճակը հավասարեցվել է աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող կազմակերպությունների ռեեստրում գրանցված մասնակիցների կարգավիճակին: Մասնավորապես.

«Աուդիտորական գործունեության մասին» 2002թ. ՀՀ օրենքի համաձայն՝ աուդիտորական ծառայություններ կարող է իրականացնել միայն այն աուդիտորական կազմակերպությունը, որը ունի լիազոր մարմնի կողմից տրամադրված լիցենզիա:

«Աուդիտորական գործունեության մասին» 2019թ. ՀՀ օրենքի համաձայն՝ աուդիտորական կազմակերպությունը ձեռք է բերում աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք այն ամսաթվից, երբ նրա մասին տեղեկությունները գրանցվում են մասնագիտացված կառույցի՝ աուդիտորական կազմակերպությունների, աուդիտորների և փորձագետ հաշվապահների ռեեստրում (այսուհետ՝ ռեեստր):

Այսպիսով, «Աուդիտորական գործունեության մասին» 2002թ. ՀՀ օրենքի համաձայն ընկերությանը աուդիտորական գործունեությամբ զբաղվելու, աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք տալիս էր լիազոր մարմնի՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված լիցենզիան, իսկ 2019թ. օրենքի համաձայն՝ նման իրավունքը առաջանում է, եթե նրա մասին տեղեկությունները գրանցվում են մասնագիտացված կառույցի՝ աուդիտորական կազմակերպությունների, աուդիտորների և փորձագետ հաշվապահների ռեեստրում:

2021թ. «ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ընկերությունը դիմել է ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ իրավահարաբերության առկայությունը ճանաչելու պահանջով (թիվ ՎԴ/1299/05/21 գործ):

Ներկայացված վարչական գործով «ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ընկերությունը 15.03.2021թ. դիմել է դատարանին՝ հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդությամբ: Նշված միջնորդությամբ ՓԲԸ-ն նշել է, որ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ըստ 2021 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած ՀՕ-283-Ն օրենքի 30-րդ հոդվածի այն աուդիտորական կազմակերպությունը, որը չի անդամակցում մասնագիտացված կառույցներին, իրավունք չունի մատուցելու աուդիտորական ծառայություններ, գտնում ենք, որ մինչև սույն գործով վեճն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը հայցի ապահովման միջոցներ չձեռնարկելը էականորեն կդժվարեցնի դատական ակտի կատարումը, քանի որ միջոցներ չձեռնարկելը կարող է բերել այնպիսի իրավիճակի, որ Ընկերությունը չիրականացնելով իր միակ տնտեսական գործունեությունը: Ամբողջ վերոգրյալը առաջացնում է հիմնավոր ռիսկեր, որ հայցի ապահովման միջոցներ չձեռնարկելու դեպքում բարձր է հավանակությունը, որ Ընկերությունը կկրի գույքային վնասներ: Ընդ որում, նման հայցի ապահովում ձեռնարկելը կլինի այն անհրաժեշտ ու համաչափ միջոցը, որը թույլ չի տա Ընկերությանը զգալի վնասներ պատճառվել մինչև սույն գործն ըստ էության լուծող դատական ակտն օրինական

ուժի մեջ մտնելը: Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումներով, հաշվի առնելով, որ նշված հայցի ապահովման միջոցները չձեռնարկելու արդյունքում Ընկերության համար վրա հասնելիք հնարավոր անբարենպաստ հետևանքները դժվարեցնելու են, մինչև անգամ կարող են անհնարին դարձնել սույն գործն ըստ էության լուծող դատական ակտի կատարումը՝ ընկերությունը միջնորդել է կիրառել համապատասխան հայցի ապահովման միջոցներ:

Դատարանը 17.03.2021թ. կայացրած հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշմամբ արգելվել է ՀՀ ֆինանսների նախարարության պահանջել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ թիվ ԱԾ №054 «Աուդիտորական ծառայությունների իրականացման» լիցենզիան: Նույն որոշմամբ որոշվել է պահպանել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ աուդիտորական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձի կարգավիճակը (իրավիճակը):

Հայցվոր ընկերության կողմից նման հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդություն ներկայացնելու նպատակն ակնհայտ է, որ եղել է ընկերության իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար իրավական երաշխիք ունենալը (վերոհիշյալ հիմնավորումը առկա է որոշման պատճառաբանական մասում): Հենց դրան է կոչված նաև հայցի ապահովման դատավարական ինստիտուտը՝ դատարանի կողմից նախապես ձեռնարկվող որոշակի միջոցներով հնարավոր բացասական հետևանքներից պաշտպանել հայցվորի իրավունքները և օրինական շահերը:

«Աուդիտորական գործունեության մասին» 2002թ. ՀՀ օրենքի համաձայն՝ աուդիտորական կազմակերպություն է համարվում աուդիտորական ծառայություններ իրականացնող իրավաբանական անձը:

Նույն օրենքի համաձայն՝ աուդիտորական ծառայությունների իրականացման հիմքը հանդիսանում է լիազորված մարմնի կողմից տրամադրված լիցենզիայի առկայությունը:

Այլ կերպ ասած, «Աուդիտորական գործունեության մասին» 2002թ. ՀՀ օրենքի համաձայն՝ աուդիտորական ծառայություններ կարող է իրականացնել միայն այն աուդիտորական կազմակերպությունը, որը ունի լիազոր մարմնի կողմից տրամադրված լիցենզիա:

Հենց այս տրամաբանությամբ է Դատարանի կողմից բավարարվել «ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ընկերության 15.03.2021թ. հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդությունը և որոշել արգելել ՀՀ ֆինանսների նախարարության պահանջել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ թիվ ԱԾ №054 «Աուդիտորական ծառայությունների իրականացման»

լիցենզիան և պահպանել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ աուդիտորական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձի կարգավիճակը (իրավիճակը):

Բանն այն է, որ լիցենզիա ունենալու կարգավիճակի պահպանությունը «Աուդիտորական գործունեության մասին» 2002թ. ՀՀ օրենքի տրամաբանությամբ նշանակում է, որ աուդիտորական կազմակերպությունը ունի իրավունք իրականացնելու աուդիտորական գործունեություն: Համապատասխանաբար, կազմակերպությունը չի կարող ունենալ իրավունք զբաղվելու աուդիտորական գործունեությամբ, եթե չպահպանվի իր՝ լիցենզիա ունենալու կարգավիճակը, քանի որ աուդիտորական գործունեությամբ զբաղվելու իրավունքը բխում է լիզենզիա ունենալու կարգավիճակից:

Այս տեսանկյունից գտնում ենք, որ լիցենզիա ունենալու կարգավիճակի պահպանությունը իր մեջ ներառում է, կլանում աուդիտորական գործունեությամբ զբաղվելու իրավունքը:

Վերոհիշյալը բխում է հենց Դատարանի 17.03.2021թ. կայացրած հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման տրամաբանությունից, քանի որ նման հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման նպատակն ակնհայտ է, որ եղել է ընկերության իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար իրավական երաշխիք ունենալը: Հենց դրան է կոչված նաև հայցի ապահովման դատավարական ինստիտուտը՝ դատարանի կողմից նախապես ձեռնարկվող որոշակի միջոցներով հնարավոր բացասական հետևանքներից պաշտպանել հայցվորի իրավունքները և օրինական շահերը:

Նույնը արձանագրվել է նաև Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 31.01.2022թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/01 իրավապարտադիր որոշմամբ, որով բողոքներ քննող անձը հիմք ընդունելով ՎԴ/1299/05/21 վարչական գործով դատարանի կողմից 17.03.2021թ. կայացրած հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը արձանագրել է հետևյալը. «Աուդիտորական գործունեության մասին» 2002թ. ՀՀ օրենքի համաձայն աուդիտորական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձի կարգավիճակը նույնական է «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ մասնագիտական կառույցի պաշտոնական կայքի «Ռեեստր» բաժնում առկա ցանկում գրանցված աուդիտորական կազմակերպությունների ցանկում գրանցված լինելուն: Բողոքներ քննող անձը արձանագրել է, որ ՎԴ/1299/05/21 վարչական գործով դատարանի կողմից 17.03.2021թ. կայացրած հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ին տալիս է աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք առանց «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ մասնագիտական կառույցի պաշտոնական կայքի «Ռեեստր»

բաժնում առկա ցանկում գրանցված լինելուց: Այս հիմքով դադարեցվել է «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հայտը մերժելու գնահատող հանձնաժողովի որոշումը:

Գտնում ենք, որ թիվ ՎԴ/1299/05/21 վարչական գործով Դատարանի 17.03.2021թ. կայացրած հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման և Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 31.01.2022թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/01 իրավապարտադիր որոշման պայմաններում և դրանց լույսի ներքո Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումը՝ Ընթացակարգ 1-ը չկայացած հայտարարելու վերաբերյալ, իրավաչափ չէ:

Վերոհիշյալով գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ վկայակոչված նորմերի պահանջները:»:

Ելնելով վերոգրյալներից՝ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-02/2022» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-02/2022» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամին «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-02/2022» ծածկագրով գնանշման հարցման արդյունքում կնքել պայմանագիր «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հետ:

3. Պարտավորեցնել «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-04/2022» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չեղյալ հայտարարել «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-04/2022» ծածկագրով ընթացակարգը:

3. <u>Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 19.04.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/6808-2022 գրությամբ դիմել է Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 18.04.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն, 22.04.2022թ.-ին գրությամբ ներկայացնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված փաստաթղթերը, հայտնել է հետևյալը.

«1.1. Հայաստանի վերականգնվող էներգետիկայի *և էներգախնայողության հիմնագրամի (այսուհետ Պատվիրատու կամ հիմնադրամ) կողմից հայտարարկել է թիվ «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-02/2022» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ Ընթացակարգ 1) Հիմնադրամի կարիքների համար ֆինանսական աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով:*

1.2. Ընթացակարգ 1-ին մասնակցելու հայտ է ներկայացրել նաև «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն (այսուհետ Բողոքաբեր կամ Ընկերություն), որը գնահատող հանձնաժողովի 17.01.2022 թվականի որոշմամբ ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից համաձայն թիվ 3 Արձանագրության:

1.3. Ընկերությանը հաղթող ճանաչելուց հետո Պատվիրատուն 25.02.2022 թվականի թիվ 31 գրությամբ դիմում է ՀՀ ֆինանսների նախարարությանը որպես լիազոր մարմնի, Ընկերության կողմից տրված աուդիտորական հաշվետվությունը ընդունելի համարվելու հարցի կապակցությամբ:

1.4. ՀՀ ֆինանսների նախարարությունը թիվ 02/3-1/3846-2022 գրությամբ շիմնադրամին հայտնել է, որ «...Ռեեստրում չգրանցված կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունները Օրենքի իմաստով չեն հանդիսանում աուդիտորական ծառայություններ, դրանց արդյունքում տրված եզրակացությունները չեն հանդիսանում աուդիտորական եզրակացություն»:

1.5. ՀՀ ֆինանսների նախարարությունը մեկ այլ թիվ 02/26-1/265-2022 գրությամբ էլ բոլոր պետական մարմիններին ու նրանց ենթակայությամբ գործող հիմնարկներին ու ընկերություններին հայտնել է, որ աուդիտորական ծառայությունների գնման ընթացակարգերը կազմակերպելիս պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ նման ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող անձինք և կազմակերպությունները պետք է գրանցված լինեն համապատասխան Ռեեստրում:

1.6. Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հրավերում նշված տեխնիկական բնութագիրը այնքանով, որքանով չի սահմանում աուդիտորի կամ աուդիտորական կազմակերպության ռեեստրում գրանցված լինելու պահանջ, չի համապատասխանում իր գնման պահանջին, և դրա հիման վրա

պայմանագիրը Ընկերության հետ ենթակա չէ կնքման, 18.03.2022 թվականի որոշմամբ Արձանագրություն 4, որոշել է չկայացած հայտարարել Ընթացակարգ 1-ը:

1.7. Քանի որ հիմնադրամի մոտ առաջացել է նոր գնման պահանջ ռեեստրում հաշվառված աուդիտորի կամ աուդիտորական կազմակերպության կողմից ֆինանսական աուդիտի եզրակացության ձեռբերման կարիք, Հիմնադրամը 28.03.2022թ թվականին հայտարարել է թիվ «ՀՎԷՀ-ԳՀԾՁԲ-04/2022» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ Ընթացակարգ 2), որը տեխնիկական բնութագրով տարբերվում է Ընթացակարգ 1-ից:

1.8. Ընթացակարգ 2-ի կապակցությամբ հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 04.04.2022թ., գնահատման նիստի արձանագրությանը կազմվել է 08.04.2022թ, պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը 08.04.2022թ, անգործության ժամկետ է սահմանվել մինչև 17.04.2022թ.:

1.9. Ընթացակարգ 2-ի մասով չի բողոքը որևէ հիմքեր ու հիմնավորումներ չի պարունակում, դրանով չի բողոքարկվել պայմանագիր կնքելու մասին որոշումը, ոչ էլ մրցույթի հրավերի պահանջները:

Ոաումնասիրելով ներկայացված բողոքը գտնում ենք, որ այն անհիմն է ու ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ Օրենք) 2-րդ հոդվածը սահմանում է՝

«Գնում՝ պատվիրատուի հատուցմամբ՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու միջոցով բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքնևրի և ծառայությունևների ձեռքբերումը, լիզինգը, պատվիրատուի կողմից նվիրաբերության կարգով իրավաբանուևական անձանց հատկացվող միջոցների հաշվին ապրանքների, աշխատանքների ե ծառայությունների ձեռքբերումը, փոխանակման ձևով ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերումը»:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝ [...] պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Վերոգրյալ հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ պետական գնումը պատվիրատուի կոնկրետ կարիքի բավարարման կազմակերպվող գործընթաց է:

Ընդ որում, այդ կարիքը պատվիրատուի մոտ ձևավորվում է ոչ ինքնանպատակ: Նման կարիքի ձևավորումը պայմանավորվում է օրենքի ուղղակի պահանջով:

Սույն դեպքում Պատվիրատուի մոտ առաջացել է աուդիտորական ծառայությունների ձեռքբերման կարիք, քանի որ պատվիրատուն հանդիսանում է հիմնադրամ, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի հիման վրա պետք է ներկայացնի աուդիտորական եզրակացություն:

Մասնավորապես, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր տարի հաշվետու տարվան հաջորդող հուլիսի 1-ից ոչ ուշ հիմնադրամը՝ հիմնադրամների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված համակարգում պարտավոր է հրապարակել հաշկապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը, եթե հաշվետու տարվա վերջի դրությամբ հիմնադրամի ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է 10 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը:

Քանի որ Պատվիրատուի ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է 10 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը վերջինս պարտավոր է ներկայացնել աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացություն: ՀՀ պետական եկամուտների կոմիտե նախագահի 17-ը ապրիլի 2020 թվականի «հիմնադրամների գործունեության մասին հաշվետվության օրինակելի ձևը, հրապարակման և ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017 թկականի փետրվարի 24-ի թիվ 58-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 337-Ն հրամանի 1-ին կետի համաձայն Հիմնադրամն իր գործունեության մասին հաշվետվությունը, իսկ աուդիտը պարտադիր լինելու դեպքում, նաև ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը, օրենքով սահմանված

կարգով և ժամկետներում հրապարակում է ՀՀ ՊԵԿ հարկային ծառայության պաշտոնական կայքում (www.taxservice.an0: Իսկ 15-րդ կետի համաձայն Հաշվետվությանը կցվում է հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը, եթե հաշվետու տարվա վերջի դրությամբ հիմնադրամի ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է 10 միլիոն ՀՀ դրամը:

Այսինքն, աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացություն ձեռք բերելու կարիքը Պատվիրատուի որպես հիմնադրամի մոտ ծեավորվում է օրենքի ուժով:

Եվ քանի որ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը ոչ թե ներքին օգտագործման փաստաթուղթ է, այլ օրենքով սահմանված լիազոր մարմին ներկայացնելու ենթակա պարտադիր փաստաթուղթ, ապա այն պետք է համապատասխանի այն պահանջներին, որը լիազոր մարմնի համար ընդունելի կհամարվի:

«Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող աուդիտորական գործունեության ոլորտում քաղաքականություն իրականացնող մարմինը ֆինանսների նախարարությունն է՝ համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի:

Այսինքն, ՀՀ ֆինանսների նախարարությունն է որոշում, թե որ պահանջներին համապատասխանող եզրակացություններ համարվում ընդունելի աուդիտորակաան եզրակացություն: Այլ կեպ ասած, միայն ֆինանսների նախարարության կողմից ընդունելի աուդիտորական եզրակացություն ունենալով հիմնադրամները կբավարարեն օրենքի պարտադիր պահանջներին:

Ինչպես նշեցինք, ՀՀ ֆինանսների նախարարությունը թիվ 02/3-1/3846-2022 գրությամբ Հիմնադրամին հայտնել է, որ «...Եեեստրում չգրանցված կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունները Օրենքի իմաստով չեն հանդիսանում աուդիտորական ծառայություններ, դրանց արդյունքում տրված եզրակացությունները չեն հանդիսանում աուդիտորական եզրակացություն», իսկ մեկ այլ թիվ 02/26-1/265-2022 գրությամբ էլ բոլոր պետական մարմիններին ու նրանց ենթակայությամբ գործող հիմնարկներին ու ընկերություններին հայտնել է, որ աուդիտորական ծառայությունների գնման ընթացակարգերը կազմակերպելիս պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ նման ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող

անձինք և կազմակերպությունները պետք է գրանցված լինեն համապատասխան Ռեեստրում:

Նման պայմաններում Հիմնադրամի համար ակնհայտ է, որ ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-02/2022 ծածկագրով գնանշման հարցման Ընթացակարգ 1-ի տեխնիկական բնութագրով ձեռք բերվող աուդիտորական եզրակացությունը չի բխում իր գնման պահանջից: Այլ կերպ ասած Հիմնադրամի մոտ վերացել է այնպիսի աուդիտորական եզրակացություն ստանալու պահանջը, որը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից սահմանված չափանիշներին չի համապատասխանում: Արդյունքում Հիմնադրամի մոտ ձևավորվել է գնման նոր պահանջ ձեռք բերել ՀՀ ֆինանսների նախապարության կողմից սահմանված չափանիշներին համապատասխանող աուդիտորական եզրակացություն, այն է աուդիտորական ծառայությունների մատուցման իրավունք ունեցող աուդիտորաների և աուդիտորական կազմակերպությունների ռեեստրում գրանցված աուդիտորի կողմից տրված աուդիտորական եզրակացություն:

Այսինքն, սույն վեճի առարկան ինքնին այն չէ, թե Բողոքաբերը առհասարակ կարող է եզրակացություն տալ, թե ոչ, այլ վեճը կայանում է նրանում, որ Ընթացակարգ 1-ով սահմանված գնման պահանջը չի համապատասխանում Հիմնադրամի կարիքներին, որը բխում է օրենքով իր վրա դրված պարտականությունները կատարելու անհրաժեշտությունից:

Նման պայմաններում սույն գործով որևէ նշանակություն չունի ՀՀ վարչական դատարանի թիվ 4Դ/1299/05/21 վարչական գործով կիրառված հայցի ապահովման միջոցի առկայություն: Սակայն նկատենք նաև, որ թիվ 4Դ/1299/05/21 վարչական գործով կիրառվել է հետևյալ հայցի ապահովման միջոցը տառացի մեջբերում ՀՀ Ֆինանսների նախարարությանը արգելել պահանջել <<Բեյթեր Թիլլի Արմենիա>> ՓԲ ընկերության թիվ ԱԾ №054 <<Աուդիտորական ծառայությունների իրականացման>> լիցենզիան, և պահպանել <<Բեյքեր Թիլլի Արմենիա>> ՓԲ ընկերության աուդիտորական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձի կարգավիճակը (իրավիճակը) մինչև սույն գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Այսինքն, հայցի ապահովմամբ պահպանվել է Բողոքաբերի լիցենզիա ունեցող անձի կարգավիճակը (իրավիճակը), և վերջինս կարող է աուդիտորական եզրակացություն տալ բացառապես այն կազմակերպություններին, ում բավարար է ինքնին լիցենզիայի առկայությունը: Սակայն երբ պահանջվում է նաև ռեեստրում գրանցված լինելը Բողոքաբերը այդ գնման ընթացակարգին մասնակցելու իրավունք չունի:

Վերոգրյալի հաշվառմամբ Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով այն, որ առանց ռեեստրից գրանցման աուդիտորի կողմից տրված

եզրակացության կարիք չունի և փվյալ պահին Բողոքաբերի հետ չի կնքել պայմանագիր ղեկավարվելով Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով 18.03.2022 թվականին ընդունել է որոշում ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-02/2022 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

Դրանից հետո Պատվիրատուն հիմք ընդունելով աուդիտորական ծառայությունների մատուցման իրավունք ունեցող աուդիտորների և աուդիտորական կազմակերպությունների ռեեստրում գրանցված աուդիտորի կողմից տրված աուդիտորական եզրակացություն ձեռք բերելու գնման պահանջով, հայտարարել է գնման նոր ընթացակարգ ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-04/2022 ծածկագրով գնանշման հարցում Ընթացակարգ 2-ը: Վերջինիս հրավերով ներկայացվել է գնման առարկայի նոր տեխնիկական բնութագիր, այն է աուդիտորական կազմակերպությունը պետք է ունենա առնվազն 5 տարվա աուդիտորական փորձ ֆինանսական կազմակերպություններում և հիմնադրամներում, գրանցված լինի աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող աուդիտորների և աուդիտորական կազմակերպությունների ռեեստրում, հետևյալ հղմամբ

http://minfm.am/hy/page/auditorneri_pordzaget_hashvapahneri_ev_auditorakan_kazmakerputyunneri_miasnaka n_reestr/ կայքում):

Նման պայմաններում հերքվում է Բոդոքաբերի այն պնդումը, թե պատվիրատուն նույն տեխնիկական բնութագրով այլ ընթացակարգ է կազմակերպել:

Բացի այդ, ցանկանում ենք ընդգծել, որ Ընթացակարգ 2-ի մասով բողոքը չի համապատասխանում օրենքի 50-րդ հոդվածի պահանջներին: Մասնավորապես, Բոդոքաբերը չի նշել Ընթացակարգ 2-ի մասով վեճը, միայն ներկայացրել է այն չեղյալ հայտարարելու պահանջ, սակայն չի նշել թե այդ պահանջը Օրենքի որ դրույթից է բխում, կամ առ հասարակ կարող է նման բողոք ներկայացվել, թե ոչ: Ավելին, Ընթացակարգ 2-ի մասով Բոդոքաբերը կարող էր որևէ պահանջ ներկայացներ մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը 04.04.2022թ., ինչը չի արվել, հետևաբար այս փուլում չի կարող նման վիճարկում լինել: Կամ բողոք կարող էր ներկայացվել անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշման դեմ, ինչը ևս չի արվել մինչև 17.04.2022 թվականը:

Ավելին, ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-04/2022 ծածկագրով գնանշման ընթացակարգը ավարտվել է և պետք է պայմանագիր կնքվի հաղթող ճանաչված մասնակցի հետ:

Հարկ ենք համարում նաև ընդգծել, որ բոդոքաբերի պահանջը չի բխում Օրենքով բողոքներ քննող անձին վերապահված լիազորություններից:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2022/68 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կողմից ֆինանսական աուդիտի ձեռքբերման նպատակով 10.01.2022թ.-ին հայտարարվել է «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-02/2022» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 1):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 17.01.2022թ.-ի նիստի թիվ 03 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ին և ծանուցել սահմանված ժամկետում 1-ին տեղը զբաղեցնող մասնակցին՝ առաջարկելով ներկայացնել որակավորման ապահովման վերաբերյալ հրավերով սահմանված փաստաթղթերը:

iv. www.gnumner.am կայքում 10.02.2022թ.-ին հրապարակվել է «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-02/2022» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքելու մասին հայտարարություն:

v. Հանձնաժողովի 15.03.2022թ.-ի նիստի թիվ 04 արձանագրության համաձայն՝ «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-02/2022» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում 17.01.2022թ. գնահատող հանձնաժողովի որոշմամբ հաղթող է ճանաչվել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն, որը գրանցված չէ աուդիտորոկան ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող կազմակերպությունների ռեեստրում:

Համաձայն «Աուդիտորական գործունեության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի՝ աուդիտոր է համարվում «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքով սահմանված՝ մասնագիտացված կառույցի անդամ հանդիսացող ֆիզիկական անձը, որն ունի աուդիտորի որակավորում, իսկ աուդիտորական կազմակերպություն է համարվում մասնագիտացված կառույցի անդամ հանդիսացող իրավաբանական անձը, որն իրավունք ունի մատուցելու աուդիտորական ծառայություններ և գրանցված է աուդիտորների և աուդիտորական կազմակերպությունների ռեեստրում:

Ոատի, անհրաժեշտություն է առաջացել կատարել փոփոխություններ տեխնիկական առաջադրանքի ծառայությունների շրջանակներում «լավագույն առաջին տասնյակ աուդիտորական կազմակերպություն» պահանջը փոխել և ընտրություն կատարել աուդիտորական կազմակերպություններից, որոնք գրանցված լինեն աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող աուդիտորների և աուդիտորական կազմակերպությունների ռեեստրում:

vi. Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջները, որոշել է «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-02/2022» ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած: Հաստատել ընթացակարգի չկայացման մասին հայտարարության տեքստը և Օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հրապարակել հայտարարությունը գնումների պաշտոնական տեղեկագրում:

vii. www.gnumner.am կայքում 18.03.2022թ.-ին հրապարակվել է «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-02/2022» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարություն:

viii. Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կողմից ֆինանսական աուդիտի ձեռքբերման նպատակով 28.03.2022թ.-ին հայտարարվել է «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-04/2022» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 2):

ix. Ընթացակարգ 2-ի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար պետական գնման պայմանագրի (այսուհետ նաև՝ Պայմանագիր) հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցի (այսուհետ նաև՝ Հավելված 1) համաձայն՝ բացի այլ չափորոշիչներից սահմանվել է, որ Աուդիտորական կազմակերպությունը պետք է ունենա առնվազն 5 տարվա աուդիտորական փորձ ֆինանսական կազմակերպություններում և հիմնադրամներում, գրանցված լինի աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող աուդիտորների և աուդիտորական կազմակերպությունների ռեեստրում, հետևյալ հղմամբ՝ http://minfin.am/hy/page/auditorneri_pordzaget_hashvapahneri_ev_auditorakan_kazmakerputyunneri_miasnakan_reestr/ կայքում):

x. ՀՀ վարչական դատարանի (նախագահությամբ դատավոր՝ Հր. Այվազյանի) 17.03.2021թ.-ին թիվ ՎԴ/1299/05/21 վարչական գործով հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդությունը մասնակի բավարարելու մասին կայացված որոշման (այսուհետ նաև՝ Որոշում) համաձայն՝ *«... Տվյալ դեպքում նկատի ունենալով, որ սույն գործի շրջանակներում քննության առարկա է հանդիսանում <<Բեյքեր Թիլլի Արմենիա>> ՓԲ*

ընկերության աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անձի կարգավիճակից բխող <<Բեյքեր Թիլլի Արմենիա>> ՓԲ ընկերության և ՀՀ ֆինանսների նախարարության միջև իրավահարաբերության առկայությունը ճանաչելը, իսկ այդ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը կարող է ճանաչվել միայն գործն ըստ էության լուծող դատական ակտով, և որոշակի հայցի ապահովում չկիրառելու և հայցի հնարավոր բավարարման դեպքում, գործի քննության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում կարող են խախտվել հայցվորի իրավունքները, և ըստ էության անհնարին կդառնա կամ կդժվարանա վճռի կատարումը, քանի որ կայացված վճիռը կկորցնի իր նշանակությունը, հետևաբար՝ Դատարանը գտնում է, որ պատասխանող ՀՀ Ֆինանսների նախարարությանը պետք է արգելել պահանջել <<Բեյքեր Թիլլի Արմենիա>> ՓԲ ընկերության թիվ ԱԾ №054 <<Ֆինանսական աուդիտի իրականացման>> լիցենզիան, և պահպանել <<Բեյքեր Թիլլի Արմենիա>> ՓԲ ընկերության աուդիտորական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձի կարգավիճակը՝ մինչև սույն գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:...»:

Որոշմամբ թիվ ՎԴ/1299/05/21 վարչական գործով ներկայացված հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարվել է մասնակի.

ՀՀ ֆինանսների նախարարությանը արգելվել է պահանջել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի թիվ ԱԾ №054 «Ֆինանսական աուդիտի իրականացման» լիցենզիան, և պահպանվել է «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի աուդիտորական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձի կարգավիճակը (իրավիճակը)՝ մինչև տվյալ վարչական գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը: Մնացած պահանջների մասով հայցի ապահովման միջնորդությունը մերժվել է: Որոշումը՝ հայցի ապահովման միջոցներ կիրառելու մասով, օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

xi. ՀՀ վարչական դատարանի (նախագահությամբ դատավոր՝ Հր. Այվազյանի) 27.04.2021թ.-ին թիվ ՎԴ/1299/05/21 վարչական գործով հայցի ապահովման միջոցը վերացնելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին կայացված որոշման համաձայն՝ թիվ ՎԴ/1299/05/21 վարչական գործով պատասխանող ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված հայցի ապահովման միջոցը վերացնելու վերաբերյալ միջնորդությունը մերժվել է: Որոշումն օրինական ուժի մեջ է մտել կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Վերոնշյալ որոշման համաձայն՝ *«...Դատարանը գտնում է, որ հայցի ապահովման ինստիտուտը նպատակ է հետապնդում երաշխավորելու հետագայում ընդունվող դատական*

ակտի կատարումը, քանի որ հայցի ապահովման միջոց կիրառելու դեպքում պետք է հաշվի առնվի հայցվորի շահերը և այն նպատակները, որը հետապնդում է հայցի ապահովման միջոցի կիրառման դատավարական ինստիտուտը, քանի որ հայցի ապահովման միջոցի վերացման պայմաններում անձը կզրկվի իր ենթադրյալ խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանություն ստանալու հնարավորությունից:

Սույն գործով Դատարանի կողմից հայցի ապահովման միջոցի կիրառումը նպատակ է հետապնդել ապահովելու հայցվորի ենթադրյալ խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը, այն համատեքստում, որ հայցի հնարավոր բավարարման և իրավահարաբերության առկայությունը ճանաչվելու դեպքում, հայցի ապահովման միջոց կիրառված չլինելու պայմաններում կստեղծվի իրավիճակ, որ գործի քննության ողջ ժամանակահատվածում հայցվորը իրավաբանորեն ունեցել է հնարավորություն որոշակի կարգավիճակով իրացնելու իր իրավունքները, սակայն փաստացի զրկվել է այդ հնարավորությունից, և դատարանի վճիռը այդ առումով հնարավոր չի լինի կատարել:

Դատարանի գնահատմամբ, սույն դեպքում պատասխանող ՀՀ ֆինանսների նախարարության կողմից միջնորդությամբ չեն ներկայացվել հիմնավոր փաստարկներ և ապացույցներ, որոնց քննության արդյունքում կիրառված հայցի ապահովման միջոցը ենթակա կլիներ վերացման: …»:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 18.04.2022թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախոռում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին

հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ ենթակետի (օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) համաձայն՝ գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն

ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման

վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

26.12.2002թ.-ին ընդունված «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ աուդիտորական ծառայության իրականացումն առանց լիցենզիայի արգելվում է: ...:

04.12.2019թ.-ին ընդունված «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աուդիտորական կազմակերպությունը ձեռք է բերում աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք այն ամսաթվից, երբ նրա մասին տեղեկությունները գրանցվում են մասնագիտացված կառույցի՝ աուդիտորական կազմակերպությունների, աուդիտորների և փորձագետ հաշվապահների ռեեստրում (այսուհետ նաև՝ ռեեստր):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կազմակերպությունը, որի մասին տեղեկությունները պետական գրանցման ամսաթվին հաջորդող օրվանից սկսած՝ 60 աշխատանքային օրվա ընթացքում, չեն ներառվել ռեեստրում, չի կարող օգտագործել «աուդիտ», «աուդիտոր», «աուդիտորական» բառերը կամ դրանց հոլովաձևերն իր անվանման մեջ:

Վերոնշյալ նորմերի համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ 2002թ.-ին ընդունված «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի իմաստով աուդիտորական ծառայության իրականացումը պետք է կատարվեր լիցենզիայի հիման վրա, իսկ արդեն 2019թ.-ին ընդունված համանուն օրենքի իմաստով աուդիտորական կազմակերպությունը ձեռք է բերում աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք, երբ նրա մասին տեղեկությունները գրանցվում են մասնագիտացված կառույցի ռեեստրում:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կողմից ֆինանսական աուդիտի ձեռքբերման նպատակով 10.01.2022թ.-ին հայտարարված «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-02/2022» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.01.2022թ.-ի նիստի թիվ 03 արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ին և ծանուցել սահմանված ժամկետում 1-ին տեղը զբաղեցնող մասնակցին՝ առաջարկելով ներկայացնել որակավորման ապահովման վերաբերյալ հրավերով սահմանված փաստաթղթերը, ինչի վերաբերյալ www.gnumner.am կայքում 10.02.2022թ.-ին

հրապարակվել է «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-02/2022» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքելու մասին հայտարարություն:

Այնուհետև Հանձնաժողովի 15.03.2022թ.-ի նիստի թիվ 04 արձանագրությամբ Հանձնաժողովը, արձանագրելով, որ «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-02/2022» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում 17.01.2022թ. գնահատող հանձնաժողովի որոշմամբ հաղթող է ճանաչված «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն գրանցված չէ աուդիտորոկան ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող կազմակերպությունների ռեեստրում, որոշել է կատարել փոփոխություններ տեխնիկական առաջադրանքի ծառայությունների շրջանակներում «լավագույն առաջին տասնյակ աուդիտորական կազմակերպություն» պահանջը փոխել և ընտրություն կատարել աուդիտորական կազմակերպություններից, որոնք գրանցված լինեն աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող աուդիտորների և աուդիտորական կազմակերպությունների ռեեստրում:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Հանձնաժողովը որոշել է «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-02/2022» ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած, որի մասին www.gnumner.am կայքում 18.03.2022թ.-ին հրապարակվել է «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-02/2022» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարություն:

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կողմից ֆինանսական աուդիտի ձեռքբերման նպատակով 28.03.2022թ.-ին հայտարարվել է «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-04/2022» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար պետական գնման պայմանագրի (այսուհետ նաև՝ Պայմանագիր) հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցի (այսուհետ նաև՝ Հավելված 1) համաձայն՝ բացի այլ չափորոշիչներից սահմանվել է, որ Աուդիտորական կազմակերպությունը պետք է ունենա առնվազն 5 տարվա աուդիտորական փորձ ֆինանսական կազմակերպություններում և հիմնադրամներում, գրանցված լինի աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող աուդիտորների և աուդիտորական կազմակերպությունների ռեեստրում, հետևյալ հղմամբ՝ http://minfin.am/hy/page/auditorneri_pordzaget_hashvapahneri_ev_auditorakan_kazmakerputyunneri_miasnakan_reestr/ կայքում):

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համակարգված և համադրված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ, տվյալ դեպքում, «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-02/2022» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ընթացակարգը չկայացած

հայտարարելու մասին որոշում կայացնելով, գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթները:

Գործով ձեռքբերված փաստական տվյալների՝ մասնավորապես թիվ ՎԴ/1299/05/21 վարչական գործով 17.03.2021թ.-ին և 27.04.2021թ.-ին կայացված որոշումների ուսումնասիրության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի աուդիտորական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձի կարգավիճակը (իրավիճակը) հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդությունը մասնակի բավարարելու մասին կայացված որոշմամբ պահպանվել է, որի արդյունքում Ընկերությունը ձեռք է բերել աուդիտորական գործունեություն իրականացնելու հնարավորություն: Այլ կերպ ասած՝ 17.03.2021թ.-ին թիվ ՎԴ/1299/05/21 վարչական գործով կայացված Որոշումը Ընկերությանն օժտել է նույն իրավասությամբ և ըստ այդմ՝ նաև պարտավորությամբ, որոնք 2002թ.-ի ընդունված «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում և տրամաբանության սահմաններում վերջինս կարող էր ակնկալել:

Ավելին, ՀՀ վարչական դատարանի (նախագահությամբ դատավոր՝ Հր. Այվազյանի) 27.04.2021թ.-ին թիվ ՎԴ/1299/05/21 վարչական գործով հայցի ապահովման միջոցը վերացնելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին կայացված որոշմամբ դատարանը գտել է, որ հայցի ապահովման ինստիտուտը նպատակ է հետապնդում երաշխավորելու հետագայում ընդունվող դատական ակտի կատարումը, քանի որ հայցի ապահովման միջոց կիրառելու դեպքում պետք է հաշվի առնվի հայցվորի շահերը և այն նպատակները, որը հետապնդում է հայցի ապահովման միջոցի կիրառման դատավարական ինստիտուտը, քանի որ հայցի ապահովման միջոցի վերացման պայմաններում անձը կզրկվի իր ենթադրյալ խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանություն ստանալու հնարավորությունից: Թիվ ՎԴ/1299/05/21 վարչական գործով Դատարանի կողմից հայցի ապահովման միջոցի կիրառումը նպատակ է հետապնդել ապահովելու հայցվորի ենթադրյալ խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը, այն համատեքստում, որ հայցի հնարավոր բավարարման և իրավահարաբերության առկայությունը ճանաչվելու դեպքում, հայցի ապահովման միջոց կիրառված չլինելու պայմաններում կստեղծվի իրավիճակ, որ գործի քննության ողջ ժամանակահատվածում հայցվորը իրավաբանորեն ունեցել է հնարավորություն որոշակի կարգավիճակով իրացնելու իր իրավունքները, սակայն փաստացի զրկվել է այդ հնարավորությունից, և դատարանի վճիռը այդ առումով հնարավոր չի լինի կատարել:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները սույն որոշմամբ բերված իրավական ու փաստական հանգամանքների և արված վերլուծությունների ամբողջությամբ հիմնավոր են, որպիսի պայմաններում Հանձնաժողովի կողմից չի ապահովվել Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ինչպես նաև ռաումնասիրելով ներկայացված բողոքի փաստական և իրավական հիմքերը՝ Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթների խախտում, որի արդյունքում խախտվել է Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված պահանջները, որպիսի պայմաններում «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի ներկայացրած բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման ամբողջությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 18.04.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/68 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

1. Պարտավորեցնել «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-02/2022» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-02/2022» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը և պայմանագիր կնքել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հետ:

2. Պարտավորեցնել «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-04/2022» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չեղյալ հայտարարել «ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-04/2022» ծածկագրով ընթացակարգը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**